ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն.

1) ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան Կարեն Ջանիբեկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.19 հասցեում փակցնելու համար,

2) ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի Սերգեյ Համբարձումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.31 հասցեում փակցնելու համար,

3) ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Լևոն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտայի հ.30 հասցեում փակցնելու համար,

4) Հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի հ.17 հասցեում փակցնելու համար,

5) ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հրաբխագիտության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու Սերգեյ Հայկի Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.25 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան **Կարեն Ջանիբեկյանը** ծնվել է 1937թ. հուլիսի 1-ին Երևանում:

1964թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: 1953թ.-ից ընդհատումներով աշխատել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, 1966-1967թթ.՝ Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական դրամատիկական, 1991թ.-ից՝ Երևանի համազգային թատրոններում՝ որպես դերասան:

Խաղացել է բազմաթիվ ներկայացումներում, հեռուստաթատրոնում: Նկարահանվել է ավելի քան 50 ֆիլմերում՝ «Չախ-չախ թագավորը», «Մորգանի խնամին», «Քաոս», «Աշնան արև», «Արևիկ», «Խոշոր շահում», «Մեզանից երեքը» և այլն:

Արժանացել է բազմաթիվ մրցանակների, պատվոգրերի: 2009թ. արժանացել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի, 2004թ.՝ ՀՀ վաստակավոր արտիստի, 2010թ.՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչումներին:

Կարեն Ջանիբեկյանը մահացել է 2015թ. մարտի 22-ին, Երևանում:

ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան Կարեն Ջանիբեկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի, Կարեն Ջանիբեկյանի թոռ Գուրգեն Ջանիբեկյանի կողմից:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի **Սերգեյ Համբարձումյանը** ծնվել է 1922թ. մարտի 17-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի):

1942թ. ավարտել է ԵրՊԻ շինարարական մեխանիկայի ֆակուլտետը և դասախոսական աշխատանքի անցել նույն ինստիտուտում: 1945-1946թթ. սովորել է ասպիրանտուրայում: 1946թ. պաշտպանել է թեկնածուական, 1952թ.՝ Մոսկվայում դոկտորական ատենախոսություն: 1953թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1965թ.՝ ակադեմիկոս:

1955թ. Ս. Համբարձումյանի գործուն մասնակցությամբ հիմնադրվել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը և 1959-1971թթ. եղել է տնօրենը: 1971-1977թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենը, 1992թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի պատվավոր տնօրենը: 1974-1977թթ. լինելով ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, իսկ 1977-1991թթ. ԵՊՀ ռեկտոր, Ս. Համբարձումյանը մեծապես նպաստել է նաև հայագիտության զարգացմանը: Նրա նախաձեռնությամբ առանձին մատենաշարով լույս են տեսել հայ պատմագրության և գրականության կոթողային մի շարք գործեր:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 42 և դոկտորական 11 ատենախոսություն:

1985թ. Ս. Համբարձումյանն արժանացել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի կոչմանը: Պարգևատրվել է մի շարք մեդալներով: 2012թ. արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը:

Սերգեյ Համբարձումյանը մահացել է 2018թ. օգոստոսի 3-ին:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի Սերգեյ Համբարձումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.31 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանի և Սերգեյ Համբարձումյանի որդու՝ Արմեն Համբարձումյանի կողմից:

ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ **Լևոն Հովհաննիսյանը** ծնվել է 1924թ. մարտի 13-ին, Լենինականում (այժմ՝ Գյումրի):

1951թ. ավարտել է Երևան Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, նույն թվականից աշխատել է Հայարդնախագիծ ինստիտուտում, 1967-1988թթ.՝ որպես նախագծի գլխավոր ճարտարապետ: 1979-1985թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության վարչության քարտուղարը:

Լևոն Հովհաննիսյանն իր մեծ ներդրումն է ունեցել քաղաքամայր Երևանում և Հայաստանի տարբեր շրջաններում կառուցված այնպիսի շենքերի նախագծման աշխատանքներին, ինչպիսիք են Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի հրատարակչության շենքը (Մամուլի տուն, ՀՀ «Պարբերական» հրատարակչություն), Հանքային ջրերի գործարանները՝ Հանքավանում, Դիլիջանում, Գավառում: Համահեղինակների հետ Լևոն Հովհաննիսյանի նախագծերով կառուցվել են ԵՊՀ-ի գլխավոր մասնաշենքը, Սասունցի Դավիթ կայարանը, Փակ շուկան, բնակելի տներ Երևանում, Կիրովականում և այլն:

1987թ. Լևոն Հովհաննիսյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետի կոչումը:

Լևոն Հովհաննիսյանը մահացել է 1988թ. Երևանում:

ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Լևոն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ.30 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա հարազատների կողմից:

XX դարի հանճարեղ բանաստեղծ **Եղիշե Չարենցը (Եղիշե Աբգարի Սողոմոնյան)** ծնվել է Կարսում, 1897 թվականի մարտի 13-ին, գորգավաճառ Աբգար Սողոմոնյանի (Աբգար աղա) ընտանիքում:

Չարենցի ծնողները 1883-ին Մակուից տեղափոխվել են Էրզրում, ապա՝ Կարս:

Նախնական կրթություն ստացել է ծննդավայրի Հակոբ Ջամբազյանի հայկական

մասնավոր դպրոցում, ապա շարունակել է ռուսական ռեալական ուսումնարանում 1907-1912թթ:

1912-1915թթ. զբաղվել է ինքնակրթությամբ:

1915-ին ծնողներից գաղտնի զինվորագրվել է VI կամավորական ջոկատին և մասնակցել Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարին, տեսել ավերված Վան քաղաքը: Ականատեսի անմիջական տպավորություններով գրել է նշանավոր «Դանթեական առասպել» պոեմն, ուր Վանն անվանել է Մեռած քաղաք:

Կամավորական ջոկատով նա հասել է մինչև Սուլդուզի դաշտավայր, որտեղ հայ ամավորականները կրել են ծանր պարտություն, և Չարենցը, հրաշքով փրկվելով, 1916-ին վերադարձել է Կարս և շարունակել ստեղծագործել:

1916 թվականի վերջին Չարենցը մեկնել է Մոսկվա և ընդունվել Շանյավսկու անվան ժողովրդական համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետ՝ որպես ազատ ունկնդիր (այժմ՝ Մոսկվայի պետական մանկավարժական ինստիտուտ):

1917թ-ի վերջին, կիսատ թողնելով ուսումը, Չարենցը Մոսկվայից վերադարձել է Կարս:

1918-ին զգալով Կարսի մոտալուտ անկումը՝ Աբգար աղան ընտանիքը տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ ապրել են վեց ամիս: Այնուհետև մեկնել են Հյուսիսային Կովկաս՝ Մայկոպ: Չարենցը նրանց հետ չէր:

Ըստ որոշ աղբյուրների՝ Չարենցը Սողոմոն եղբոր հետ մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին:

1920-ի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն: Չարենցը նշանակվում է Խորհրդային Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնի վարիչ: Այդ պաշտոնում Չարենցը մեծ ներդրում է ունենում ազգային մշակույթի բարենորոգման գործում:

1921-ի մայիսին Չարենցն ամուսնանում է Արփենիկ Տեր-Աստվածատրյանի հետ և հուլիսին Հայաստանի կոմկուսի կենտկոմի հատուկ գործուղումով մեկնում են Մոսկվա՝ սովորելու:

1922-ին գրական գործունեության տասնամյակի կապակցությամբ, Մոսկվայում առաջին անգամ պետականորեն հրատարակվում է Չարենցի «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակը, որտեղ զետեղվում են մի շարք պոեմներ, բանաստեղծություններ, ինչպես նաև «Չարենց-Նամե» ինքնակենսագրական պոեմը և «Տաղարան» շարքը: Շարքն ավարտվում է «Ես իմ անուշ Հայաստանի…» տաղով:

1924թ-ի նոյեմբերին Հայաստանի կոմունիստական կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի առաջին քարտուղար Ալ. Մանուկյանի հովանավորությամբ Չարենցը մեկնում է արտասահման՝ Թուրքիա, Կապրի կղզի, Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա: Վերադառնում է հայրենիք 1925-ին:

1926թ-ի սեպտեմբերի 5-ի գիշերը Չարենցին ձերբակալում են և տանում Երևանի քաղաքային-գավառական միլիցիայի կալանատուն (մաուզերով կրակել էր քաղաքացի

Մարիանա Այվազյանի ոտքին, որը մահացու չէր): Մեկ շաբաթ այնտեղ մնալուց հետո նրան տեղափոխում են Երևանի Ուղղիչ տուն:

Չարենցին դատապարտում են երեք տարվա ազատազրկման, բայց վեց ամիս Ուղղիչ տանը մնալուց հետո նրան ազատում են՝ հաշվի առնելով սիրելի կնոջ անժամանակ մահից հետո բանաստեղծի հոգեկան ու ֆիզիկական ծանր վիճակը:

1928-35թթ. Չարենցն աշխատում է Հայպետհրատում սկզբում ենթաբաժնի, այնուհետև գեղարվեստական գրականության բաժնի վարիչ, գլխավոր խմբագիր: Հայ գիրքն իր տպագրության երկրորդ ոսկեդարն է ապրում Չարենց-հրատարակչի օրոք: Նա մեծ տեղ է հատկացնում թարգմանական գրականությանը, հիմնադրում նոտաների տպագրությունը Հայաստանում, առաջին անգամ հավաքում, խմբագրում է Կոմիտասի, արևմտահայ բանաստեղծների ստեղծագործությունները, Մ. Աբեղյանի հետ հրատարակում է «Սասունցի Դավիթ» էպոսը, ստեղծում «Էժանագին գրադարան» մատենաշարը, աշակերտության համար կազմում և հրատարակում դասագրքեր:

1932-ին Աղասի Խանջյանի հանձնարարությամբ Չարենցը ձեռնամուխ է լինում «Սասնա ծռեր»-ի տպագրության աշխատանքների կազմակերպմանը: «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի պատասխանատու խմբագիր է նշանակվում Մ. Աբեղյանը:

1931-ին Չարենցն ամուսնանում է Իզաբելլա Նիազյան-Կոդաբաշյանի հետ:

1932-ին ծնվում է նրանց ավագ դուստրը՝ Արփենիկը (Բոժիկ-փոքր աստվածուհի):

1935-ին ծնվում է Չարենցի փոքր դուստրը՝ Անահիտը (Ադոկ-Ադոնիս):

1936-ի սեպտեմբերից Չարենցը տնային կալանքում էր: Չարենցը ձերբակալվում է 1937-ի հուլիսի 27-ին:

Նա դարձավ 1937 թվականի անմեղ զոհերից մեկը:

Հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի հ.17 շենքի պատին փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Եղիշե Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Ժաննա Մանուկյանի կողմից:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հրաբխագիտության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու **Սերգեյ Հայկի Կարապետյանը** ծնվել է 1932թ.հոկտեմբերի 11-ին Երևանում:

1952-1957թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը երկրաբանական հանույթ և օգտակար հանածոների հանքավայրերի որոնում մասնագիտությամբ, ստանալով ինժեներ-երկրաբանի որակավորում: 1955թ-ից, դեռ ուսման տարիներից սկսած մինչև վախճանը, Ս.Կարապետյանը անընդմեջ աշխատել է ԵԳԻ-ում: 1961-1964թթ. սովորել է ասպիրանտուրայում անվանի գիտնական Վ.Պետրովի ղեկավարությամբ և 1968թ., Մոսկվայում՝ ԽՍՀՄ ԳԱ Մետաղական հանքավայրերի երկրաբանության, պետրոգրոֆիայի, միներալոգիայի, երկրաքիմիայի ինստիտուտում, հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Հայաստանի նորագույն լիպարիտային հրաբուխների կառուցվածքի և կազմի

առանձնահատկությունները» թեմայով, ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ս.Կարապետյանի հետագա տարիների ծավալուն երկրաբանական հետազոտությունները ընդգրկում են Հայաստանի տարածքի պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխայնությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Առաջին հերթին նրա ուսումնասիրությունները նվիրված են Հայաստանում լայնորեն արտահայտված թթու կազմի գմբեթաձև խմբի հրաբուխների առաջացման պայմանների, նյութական 46 կազմի, կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտման հարցերին, բերելով նրան տվյալ ասպարեզում քաջատեղյակ մասնագետի համբավ: Այս աշխատանքները ուղեկցվում էին յուրաքանչյուր հրաբխային կառույցի մանրակրկիտ երկրաբանա-հրաբխագիտական և երկրաբանա-պետրոգրաֆիական քարտեզների կազմմամբ, ինչը, բացի գիտական արժեքից, ունի կարևոր կիրառական նշանակություն, որովհետև այս տիպի հրաբուխների գործունեության հետ են կապված շինանյութերի արտադրության և տնտեսության տարբեր ոլորտներում լայն կիրառություն գտած հանքային հումքի այնպիսի տեսակներն, ինչպիսիք են պեռլիտները, պեմզաները, որոշ տիպի տուֆերը, օբսիդիանները և այլն:

Ս.Կարապետյանը հեղինակ և համահեղինակ է շուրջ 110 գիտական աշխատությունների՝ այդ թվում 4 մենագրությունների, 14 ձեռագիր հաշվետվությունների, ինչպես նաև միջազգային և հանրապետական գիտաժողովներին ներկայացված բազմաթիվ թեզիսների: Երկրաբանությանը նվիրումով նրա երկարամյա աշխատանքի գնահատականի վկայություն է հանդիսանում տարբեր գերատեսչությունների կողմից նրան շնորհված բազմաթիվ պատվոգրերը, գովեստագրերը, դիպլոմները, ինչպես նաև 2015թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության հուշամեդալը:

Սերգեյ Կարապետյանը մահացել է 2016թ-ին:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հրաբխագիտության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու Սերգեյ Հայկի Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.25 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Սերգեյ Կարապետյանի որդու՝ Հայկ Կարապետյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ